ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 6 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 1-Լ հրամանի հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները՝

1) Հավելվածի 12-րդ կետը «հետևանքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վերապատրաստումը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցի և հոգեմետ

(հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ լիցենզավորված բժշկական կազմակերպությունում ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին) անցնելու պարտականության և այդ ստուգման դրական արդյունքի իրավական հետևանքների» բառերով.

2) Հավելվածի 26-րդ կետը «տեղերը» բառից հետո լրացնել «՝ ըստ դիմումում նշված երկու հայտերի հերթականության» բառերով.

3) Հավելվածի Զևը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Տեղեկացված եմ նաև, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր վերապատրաստման մրցույթով անցնելու դեպքում ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր եմ լինելու լիցենզավորված բժշկական կազմակերպությունում անցել թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին), և այդ ստուգման դրական արդյունքի դեպքում իմ վերապատրաստումը դադարեցվելու է:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
10.01.2024թ.

Վահե Ղազարյան